

## «ԼՐՈ ԳԻՐԸ» ՈՐՊԵՍ ՍԿՋՔՆԱԳՔՅՈՒՐ

### Վ. Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Պոլսի աղղեցիկ հայ համայնքը վաղուց էր զգում սեփական պարզերաթերթ ունենալու պահանջը, և միայն անբարենպաստ պայմաններն էին խանգարում իրագործել վաղեմի ցանկությունը: Քաղաքի պատմությամբ զբաղվողների բերած փաստարկներից երևում է, թե օրաթերթ կարդալն այնտեղ, համենայն դեպս գրագետ ընտանիքներում, ընդունված է եղել դեռ XIX դարի սկզբներից<sup>1</sup>, և հետո տեղերից Պոլիս հասնող հայ լրագրերը ձեռքից ձեռք անցնելով «բոլորովին պատառ-պատառ էին լինում»<sup>2</sup>:

Այս պայմաններում, 1832 թ. մի առիթ պատճառ դարձավ, որ եթե ոչ ազգային պարբերաթերթ, ապա գոնե հայերեն լեզվով տաճկական պաշտոնաթերթի կրկնօրինակը հրատարակվի Պոլսում:

1831 թ. ֆրանսիացի մի հրատարակիչ, Ալեքսանդր Բլակ ազգանունով, որը 1824 թ. Զմյուռնիայում հրատարակում էր «Le Spectateur Oriental» թերթը, հրավիրվում է Պոլիս՝ ֆրանսերեն լեզվով տաճկական մի պաշտոնաթերթ հրատարակելու համար: 1831 թ. Ալեքսանդր Բլակը հիմնում է «Moniteur Ottoman»-ը («Աղղարար Օսմանյանը»), որը հիմնականում տպագրում էր պալատական լուրեր, հրովարտականեր ու դատավճիռներ:

1831 թ. նոյեմբերի 1-ին նույն Ա. Բլակի տնօրինությամբ, լույս է տեսնում ֆրանսերեն պաշտոնաթերթի տաճկերեն տարբերակը՝ «Թագվիմի վազայի» անունով: Թերթի խմբագիրն էր Գեորգ Գրիգորյանը: Այն տպագրվում էր արքունի տպարանում, որի տեսուչն էր դեռևս 1816 թ. սուլթանի կողմից հատուկ հրավիրված Պոլսահայ տպարանատեր-հրատարակիչ Գալուստ Արապյանը:

Շուտով սուլթանը հրաման տվեց հպատակ ժողովուրդներին իրենց լեզվով հրատարակելու «Թագվիմի վազային»: Այդ տեղի ունեցավ վերջինիս 11-րդ համարը լույս տեսնելուց հետո, 1832 թ. հունվարի 13-ին: Թարգմանիչն էր ոմն տիրացու Հուսիկը: Հրատարակվող թերթը, որը կոչվեց «Լրո գիր մեծի տերությանն օսմանյան», հետագայում բազմաթիվ անգամ փոխելով անվանումները՝ լույս տեսավ մոտ քսան տարի, թեև շուտով պարզվեց, որ «հպատակներին» լեզվով թերթի հրատարակությունը տհաճ է սուլթանական պալատի իշխող շրջաններում՝ որի մասին են վկայում թերթի հաճախակի խափանումները և այն վերահրատարակելու խնդրով հայերի կողմից սուլթանին արված միջնորդությունները<sup>3</sup>:

1 «Արձագանք», 1882, № 21, Ալ. Երիցյան, Ֆելիետոն «Եղանակ Բյուզանդյանի» մասին:

2 Վ. Զարգարյան, Հիշատակարան, № 4, էջ 11:

3 Տե՛ս «Հայտարար լրագիր», 1846, № 1, «Հայտարարություն»: Վ. Զարգարյան, Հիշատակարան, № 4, էջ 6: Նաև թուրք պատմաբան Սելիմ Նուրհեթի աղավաղած մեկնաբանությունը՝ «Լրո գրի» բաժանորդագրության մասին, «Ժամանակ», Քառասնամյա հիշատակարան, 1948, էջ 12:

իր սահմանափակ հնարավորություններով հանդերձ՝ «Լրո գիրը» սկիզբ դրեց պոլսահայ հրապարակախոսությունը, փորձեց ինչ-որ ձևով արտացոլել ազգային կյանքը՝ տպագրելով նյութեր պատրիարքարանի անցուղարձի, ամիրանների գործունեության, բարեգործական ընկերությունների հաստատման և այլ հարցերի շուրջը, վարժեցրեց հայերին Պոլսում սեփական լեզվով լույս տեսնող պարբերաթերթ ունենալու իրողությունը:

Սակայն, մեր կարծիքով, «Լրո գիր» լուրջ արժեքը մինչև այժմ անտեսված մեկ այլ հատկանիշի մեջ է: Եղակի իր բնույթով, նա սկզբնաղբյուրի անմիջականությամբ բացահայտում է տաճկական պետության վայրագ բարքերը, անօրինականություններն ու անկարգությունները, երկդիմի դաժան քաղաքականությունը, որոնք, որքան էլ քողարկված տաճկական գրաքննության թանձր վարագույրով, ի հայտ են բերում բավական խոսուն մի պատկեր:

«Լրո գիր» հրատարակման ժամանակ Թուրքիան արդեն ներկայացնում էր և վրոպական կապիտալին ամբողջովին գերի դարձած, տնտեսապես անուժ մի երկիր:

Թուրքիան պատրաստի շուկա էր եվրոպական երկրների համար:

Թուրքիայի տնտեսական կապիտուլացման մասին է խոսում «Լրո գիր» տպած մի հաղորդումը՝ Անգլիայի պառլամենտի վերին պալատում լորդ Գ. Ստյուարտի տված զեկուցման առթիվ. «Մեր տերությանը հետ առուտուր ընող ամեն օտար տերություններուն մեջ՝ օսմանյան տերությանը չափ մեր վաճառականներուն ամենայն մասամբ թույլտվություն ընող ու դյուրին միջոցներ գործածող մեկ տերություն մը չկա...»

Վերջապես օսմանյան տերությանը հետ ունեցած առուտուրնիս ուրիշ տերության հետ ունեցածնուս պես չէ, այլ օրըստօրե ավելնալու վրա է, հուսալի է, որ ժամանակե մը ետքը հիմակվանեն հարյուրապատիկ ալ ավելի կլլա»<sup>4</sup>:

Պատկերավոր են անցյալ դարի քառասունական թվականների Թուրքիայի ներքին կյանքն արտացոլող նյութերը:

«Մեղուի» խմբագրին ուղղած իր հայտնի նամակում Միք. Նալբանդյանն այսպիսի միտք ունի. «Իրավադատության մեջ է ազգի կյանքը և այս օրենքի վերա միայն կարող է մի ազգ հառաջանալ»<sup>5</sup>:

Թուրքիան, սակայն, տիպիկ բարբարոսական երկիր էր, ուր օրենքի փոխարեն գործում էր վրիժառության բնազդը, և հանացգործը պատժվում էր միայն կամայականության ուժով:

Թերթում տպագրված այգ կարգի նյութերն իրենք խոսում են իրենց մասին:

«Տրամայի քաղաքը, — կարդում ենք մի համարում, — Շեպիձէ գյուղեն Գասիմ անունով մեկը՝ Ալի ըսված իր գյուղացին սպանելը՝ դատաստանի ժամանակ խոստովաներ է և մեռնողին ժառանգները փոխադարձը (զըսասը) խընդրելուն համար, նույն մարդասպանն ալ փոխարինաբար պիտի սպանվի»: Կամ. «Քիրմաստի քաղաքին Թիմոր էլի գյուղեն՝ առաջին մյուխտար հաճի Ահմետը սպանող Ալի և Սալիհ մարդասպաններն ալ՝ նմանապես ժառանգներուն ուզելովը փոխարինաբար պիտի սպանվին»<sup>6</sup>:

<sup>4</sup> «Լրագիր» («Սուրհանդակ Թյուզանդյան»), 1849, № 106:

<sup>5</sup> Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Յրևան, 1953, էջ 360:

<sup>6</sup> «Հայտարար Գիր Լրո», 1841, № 28:

Մարդասպանի նկատմամբ դատավճիռը կարող էր լինել պայմանական, թեև դարձյալ նրա ապրելու կամ շապրելու խնդիրը լուծում էին ժառանգները: Այդպիսի մի երկիմաստ դատավճռից իմանում ենք, որ որոշակի գնով մարդասպանի հանցանքը ներվել է, բայց «...Հիշյալ Իլամը ըստ կանոնի ֆեթվախանեին ցույց տրվելով՝ օրինավոր ըլլալը իմացվելեն հետո՝ որպիսությունը ըստ սովորության վեհափառ և արդարադատ ինքնակալին ծանուցվեցավ, որ եթե սպանվող մարդուն ժառանգները այսուհետև ալ չներեն նէ՝ անոնց ներկայությանը գլխատվի»<sup>7</sup>:

Պատժի այս խայտաբղետությունը Թուրքիայում տարածվում էր ոչ միայն սովորական մահկանացուների վրա: Հանցանք էին գործում և նույն կամայական ձևով պատժից ազատվում առաջին հերթին տաճիկ բարձրաստիճան պաշտոնյաները: Թե որքան ձևական էր Մահմուդ II-ի բարեփոխությունները ժառանգած որդու՝ սուլթան Մեջիդի 1839 թ. Գյուլհանեում կարդացած հրովարտակր, կամ հետագայում վերախմբագրված «Թանզիմաթը», վկայում են թերթի բազմաթիվ հաղորդումները:

Ահա անձի ապահովությունը թղթով երաշխավորվելուց հետո՝ տաճիկ պաշտոնյայի թույլ տված մի սանձարձակության նկարագրություն: «Դոնեաթի նախկին կուսակալ Հասան Հագգը փաշան անցյալները Պոլիս գալն ետքեն՝ ճամբուն վրա գտնված խան քաղաքը կմտնա, ուրտեղ իրեն համար շուտով բնակարան մը պատրաստած չլլալուն՝ կբարկանա ու մոտը գտնված Պարտագճի գուղը գնալով՝ հիշյալ քաղաքին վերակացուն մուղիբը վելի աղան հոն բերել կուտա, և Պետերհան Իբրահիմ աղային տանը բակին մեջ սյունի (տյուրեկի) մը կկապե ու երկու անդամ անխնա կծեծե՝ 400 գավազան զարկելով: Հիշյալ վելի աղան չիդիմանալով՝ երեք օրեն ետև կմեռնի, որուն ժառանգները՝ հրամանավ ինքնակալին հիշյալ փաշան Պոլիս բերել կուտան և նախ արդարության վճոց պերագույն ատյանը ու այնուհետև բարձրապատիվ Շեյխսլամին ներկայությանը դատաստան ընել տալով՝ ամեն կերպ մանրամասն քննությունները ըլլալեն ետև փաշային ըրած անօրինությունը երևան կելլա, ու ըստ օրինի վճիռ կլլա որ փաշան մեռնողին արյան դինը վճարե ժառանգներուն»<sup>8</sup>:

Փաշայի թույլ տված վայրագության համար նրան սպանելը Թուրքիայում ընդունված չէր, մանավանդ որ պատժվում էր գործած տասնյակ նման հանցանքներից մեկը միայն, այդ պատճառով Բարձրագույն ատյանը նրան իջեցնում է «հասարակ մարդոց» շարքը և հինգ տարով աքսորում այլ քաղաք:

Ինչ աստիճանի պիտի հասնեի իր դաժանություններում Գոճա-իլի մյուղիբ Աքիֆ փաշան, որը նույնիսկ թերթի արտահայտությամբ՝ «ճշմարտության ու արդարության կանոնին» դեմ գործելով և «զուլումներ» անելով, ստիպում է հազարավոր մարդկանց լաց ու ողբով Պոլիս թափվել՝ փաշայի արարքների դեմ բողոքելու համար: Գազանաբարո փաշային նույնպես Ատյանը միայն զրկում է վեզիրության աստիճանից<sup>9</sup>:

Բայց թերթի հետագա համարներում տպագրված դատավարական նյութերը բացահայտում են հանցագործությունների մի ամբողջ շղթա՝ կապված Աքիֆ փաշայի և Նաֆիզ էֆենդիի անունների հետ: Բանից պարզվում է, որ վերջինիս համեմատ վերոհիշյալ Աքիֆ փաշան նույնիսկ փոքր հանցագործ է,

<sup>7</sup> «Հայտարար լրագիր», 1846, № 13—14:

<sup>8</sup> «Արո գիրք», 1840, № 8:

<sup>9</sup> նույն տեղում:

որպիսի հանգամանքը ահա թե ինչպես է մեկնաբանում Արդարության վճռոց ժողովը. «Մեծլիսին մեջը եղողներուն այսպես հարցվեցավ, թե այս փաշան իր հանցանքին գյորե ինչ պատժո արժանի է: Անոնք ալ միաբերան պատասխանեցին, թե այս փաշային ասկից առաջ պաղի բարակ գործքերուն մեջ ըրած անվայել շարժողութիւնները, և մանավանդ իր պատիվը և փառքը պահպանելու մտքը ըրած մարդասպանութեան պես հանցանքները որ ամենուն ալ հայտնի է, հիմա անոնք հիշել պետք չէ, այլ իրեն հիմակվան հանցանքները եթե նաֆիզ էֆենտիին ասկից առաջ ըրած հանցանքին հետ բաղդատելու ըլլամք, անոր հանցանքեն քիչ մը թեթև եղած կլլա ասոր հանցանքը»<sup>10</sup>:

Վճռոց ատյանի տրամաբանութիւնը համոզելու հավակնութիւն ունի, մանավանդ որ բաղդատվում է քաղաքական հանցագործութիւնը՝ քրեականի հետ, իսկ «մեղմացուցիչ դեպք հանցանաց»-ը համատարած էր, քանի որ Թուրքիայի տիրակալների մեծ մասը Աքիֆ փաշայի պես տգետ և անգրագետ էր:

Իրավաբանական և օրենսդրական նման քառսում կաշառակերութիւնը, բնականաբար, աներևակայելի շափեր և բազմաստիճան ձևեր էր ընդունում:

Թերթի էջերը համարից-համար զբաղեցնում է մի դատավարութիւն, որը կոչվում է «նախկին սաղրաղամ խոսրով փաշայի հանցանքները»: Խոսքը վերաբերում է մեծ կաշառակերութեան, բայց խիստ հետաքրքիր է դատավճիռը՝ իր ծայրահեղ պարզունակութեամբ: Ահա այն. «...ուստի սերասքեր փաշայեն առնված ստակը՝ ետ տրվեցավ, և ասոր պես ալ թե Յեթհի փաշային մեծլիսին տված խուդին՝ և թե խոսրով և իսլի փաշաներեն ետ առնված հարցուր հիսուն հազար դուռուշը՝ Ջեքերիա փաշային թեսլիմ եղավ, և խոսրով փաշայեն՝ իր տարեկին համար խպրդի բնակիչներեն առած քիչ մը ստակեն ի զատ, միայն ճամիին ու իրեն համար առած ստակները՝ նույն բնակիչներուն ետ տրվեցավ»<sup>11</sup>: Եվ ուրիշ ոչինչ:

1839 թ. հրապարակված բարեփոխութիւնները դժգոհութեամբ ընդունվելով տաճիկ պաշտոնյաներից ու հոգևորականներից, նոր տհաճութիւնների առիթ էին ըստեղծում ենթակա ժողովուրդների համար, երբ վերջիններս փորձում էին իրականութեան վերածել այն:

Թերթում նկարագրվող մի իրադարձութիւն միաժամանակ պատկերացում է տալիս տաճիկական կառավարութեան կեղծավոր ինքնագոհութեան մասին: «Անատուրուի և Ռումելիի մեջը,— կարդում ենք այնտեղ,— որքան քաղաքներ կան նե՛ բոլորն ալ կարգի մտան, և անոնց պահպանութեան գործքը, վեզիրներեն ու ֆերիզներեն և նիզամ ասքերի գլխավորներեն զապիդ դրվելով՝ անոնց հանձնվեցավ. և հասըլաթի ժողվելն ալ, տերութեան խատեմներեն մուհասսըլ դրվելով՝ անոնց հանձնվեցավ:

Ուստի Թոխատ և անոր թափի եղած քաղաքներուն ալ խոճեկյաններեն Հելմի էֆենտին մուհասսըլ [գլխավոր հարկահավաք.— Վ. Ղ.] խրկված էր, այս մուհասսըլ՝ իբր թե ատենովը յոշիր շէր ըրեր, այն պատճառով Թոխատին բնակիչքը զարհուրելի նեղութիւն քաշեր են, և ասանկ ձայներ հանելով՝ թախամ մը ֆեսատ հանող մարդիկ հանկարծ նույն մուհասսըլին տունը մտնելով, զանիկա սպաննելին լսվեցավ:

<sup>10</sup> «Արո գիր», 1840, № 23:

<sup>11</sup> Նույն տեղում, № 16:

Ամեննցուն հայտնի է՝ որ առաջները մյուսթեղիմները ժողովրդյան ինչ ներություններ կուտային, որքա՛ն զուլումներ կնեին, բայց բարձրյալն աստված՝ ինքնակալին մերո երկար կյանք պարգևե, իլթիզամ ըսված այն զուլումները վերցնելով՝ ժողովրդյան հանգստությանը, և իր տերությանը օրեօր ամրությանը համար նորոգ բարեկարգություններ գրավ, որ այս ըրած մեծ շնորհացը և երախտյացը փոխարեն՝ շնորհակալություն տալու մարդկային կարողությունը չեր բավեր:

Ապա այժմ փոխանակ շնորհակալության՝ Թոխաթի բնակիչքը ընդդեմ աստվածային կամացը այս կերպ հանգանելին՝ հիրավի մեծ ապերախտություն և բաց ի բաց ապստամբություն ըլլալու համար, պատժոց կանոնագրքին հարկադրությամբը այս խոռվարար մարդիկը պատժել պետք եղավ»<sup>12</sup>:

Թուրքական բռնակալությունը գիտեք պատժել խստադույն ձևերով և չըխորշելով ամենավատ դեմագոգիայից՝ ոգեկոչել աստծու արդարադատությունն այնտեղ, որտեղ խոսքը վերաբերում էր հպատակ «երախտամոռ» ժողովրդին:

Անշուշտ հարմար է տաճկական պաշտոնաթերթի վկայությամբ պատմել բուն «ուայաների» կրած տառապանքների մասին, որոնց անդրադառնալով միայն ծայրահեղ առիթներով, թերթը մերկացնում է նրանց ստորացուցիչ վիճակը մի երկրում, ուր մորթված տաճիկի գլուխը գոնե ժառանգների կողմից սակարկության էր դրվում, երբ հայի գլուխն առհասարակ ոչ մի դին չուներ:

Ընդհանրապես «տաճիկ», «բնակիչ» բառերն այնպես են հակադրվում «հպատակ» բառին, ինչպես մոտավորապես «սպիտակն» է հակադրվում «սևամորթին»: Այսպիսի մի հայտարարության մեջ կարդում ենք. «Ուստի հարմար տեսնվեցավ, որ այսուհետև հացագործ՝ պագգալ և մանավ գտնվողներն ու որ հասարակության ավելի գնով բան ծախե, և կամ պակաս կշռե նե՛ այն մարդը թե՛ տաճիկ ըլլա և թե՛ հպատակ, հանցանքը ստուգվելեն հետո հանցանքի աստիճանին նայելով 3 օրեն մինչև 3 ամիս քաղաքական կառավարության դուռը բանտարկյալ կըլլա...»<sup>13</sup>: Կամ՝ «ժամանակե մը ի վեր է, որ գիշերները թե՛ Արքայանիստ քաղաքը՝ և թե՛ Իսկյուտար և էյիպ և Ալաղա քաղաքները փառու կար, բայց պաղի սպասավորները և հպատակները՝ որ վախըթլը վախըթսեղ բժիշկ և կամ դայեկ բերվելու պես հարկավոր գործքերնին կպատահեր, այս փառուան արգելք ըլլալով՝ դժվարություն և նեղություն կկրէին»<sup>14</sup>: Եվ «հանուն ծառաների ու հպատակների» վերացնելով միայն տաճիկների համար սահմանված «փառուան», սուլթանը կարգադրում է փողոցների խավարը և ամեն անկյունից սպառնացող վտանգը հաղթահարել «Ֆենեոներով»:

Մենք չենք ուզում խոսել արքայական այն բարեհաճ ողորմածությունների մասին, որ ժամանակ առ ժամանակ թերթի միջոցով վիճակվում էին հայ այս կամ այն մեծատանը, լիներ դա Պալյան, Տատյան, Տյուղյան կամ Պեղճյան ընտանիքներից, որոնք փաստորեն մեծ օգնություն էին ցույց տալիս սուլթանական կառավարությանը՝ տնտեսական կամ պետական կառավարման կարևոր բնագավառներում<sup>15</sup>: Ավելի հետաքրքիր են այն նյութերը, որոնք տաճկական բնագրից անցնելով «Լրո գրին», բացահայտում են բուն «ուայա» ժողովրդի

<sup>12</sup> «Լրո գիր», 1840, № 15:

<sup>13</sup> «Հայտարար լրագիր», 1847, № 15—16:

<sup>14</sup> «Լրո գիր», 1840, № 22:

<sup>15</sup> Տե՛ս «Հայտարար լրագիր», 1846, № № 6, 15—16, 33, 57: «Լրագիր», 1850, № 133,

սոցիալական ծանր վիճակը, որը ստիպում էր նրան թողնելու ամենաթանկը՝ հայրենիքը, տունը, ունեցվածքը և բռնելու գաղթի անորոշ ճանապարհը:

Ենթակա ժողովուրդների և, իհարկե, առաջին հերթին հայ ժողովրդի մասսայական արտագաղթը ռուս-թուրքական պատերազմից հետո, ըստ երեւոյթին, շատ էր անհանգստացրել դիվանագիտութուն բանեցնող սուլթանական կառավարութեանը, որ նրա պաշտոնաթերթը 1832 թ. իր համարներից մեկում գրում է. «...եվ այս անգամ Մեծափառ տերութեան՝ փախչողներուն կալվածքը և ստացվածքը ետ դարձնելովը, անոնց վրա ունեցած կատարյալ հավատարմութունը հաստատեց. և այն ստացվածքները առնելովնին՝ երախտագիտութեան պարտավոր ըլլալե, և ճշմարիտ ծառայութեան և հպատակութեան մեջը անշարժ կենալ և պահպանութուն ընել, որ իրենց սեպհական օգուտներուն առաջինը ըլլալը ամուր վկայականով հաստատված է, իրենց հանձնվեցաւ... Այն մարդիկները՝ որ իրենց աղեկ ըլլալու կարծիքով՝ ունեցած հանգստութուննին ձգեցին, և անծանոթ իշխանութեան երկիր մը փախան, արդյոք Մեծագոր տերութեան հովանավորութեամբը գտած հանգստութեան և համարձակութենին՝ այն տեղերը գտած են մի, թող անգամ մը մտմտան»: Եվ թերթը հայտարարում է, թե «Վեհափառ ինքնակալութեան օսմանյան բնական բարեգութ ըլլալովը, իրենց գլխուն աստին անդին ցրվող հպատակները՝ դարձյալ իրեն հովանավորութեան տակը բերելու շատ փափագ ունի»<sup>16</sup>:

Եվ ինչպես մարդիկ չփախչեին մի երկրից, ուր «նորոգ սահմանված բարեկարգութեան» միջոցառումները զավեշտական են թվում, այնքան շնչին են դրանք՝ տիրող անբարեկարգութեան համեմատ: Ահա մի հաղորդագրութուն, որ վերաբերում է 1846 թ.: «Այս օրերս լսվեցավ, — գրում է թերթը, — որ կառավարութեան գործակալներեն ոմանք՝ սաստիկ և անխնա կծեծեն եղեր իրենց բռնած հանցավորները առանց քննելու, այս կերպ ծեծը առաջները կար, որն որ Մեծի Տերութեանը բարեկարգութեան պատճառով արդեն վերցուցած է, ու հրաման տված է միայն հանցավորաց հանցանքը աղեկ մը քննելեն ու ստուգելեն ետքը՝ ըստ օրինի գավազանավ ծեծել, բայց ոչ անխնա և շարաշար ու առանց քննվելու, որուն բարեգութ ինքնակալին մարդասիրական գութը բնավ տեղի չի տար»<sup>17</sup>:

Բարեգութեան հասկացողութունն էլ վերը նշված քիչ ու շատ ծեծելունման հարաբերական էր թուրքիայում, ուր մինչև 1847 թ. օրինականացված էր գերեվաճառքի շուկան (եսիր-բազարը), իսկ 1847 թ. ահա թե ինչ ձևով է վերց տրվում այդ երևույթին. «Աստվածագութ Արքան, — կարդում ենք թերթում, — իմանալով որ գերի ծախված տեղը (եսիր պազարին) կերպ-կերպ ապօրինավոր հարստահարութուններ կլան գերիներուն և այս կերպ հարստահարութուն եղած տեղը բոլորովին ջնջել իր բարեսեր կամացը համաձայն ըլլալով հրաման ըրավ՝ որ Եսիր պազարի անունը բնաջինջ ըլլա, և գերի առնվիլ ու ծախվիլ հարկավորի նե, այն առուտուրը տներուն մեջ ըլլա, և անկե առնված տուրքը վերնա»<sup>18</sup>:

Մուլտրեն ընդունված այս կիսատ-պռատ օրենքները, անշուշտ, չէին կարող ցրել սուլթանի երկրում տիրող քաոսը, ինչպես չէր կարող փոխվել գրասենյակ-

16 «Լրո գիր», 1832, № 13:

17 «Հայտարար լրագիր», 1846, № 6:

18 «Հայտարար լրագիր», 1847, № 15—16:

ների խառնակութունը, ուր մինչև 1847 թ. պաշտոնյաների պարտականություններին վերաբերող որևէ կանոնագիրք անգամ չկար և, թերթի խոստովանություններ, ամեն ինչ հանձնված էր նրանց խղճին ու քմահաճույքին<sup>19</sup>, ուր անգամ սուլթանական իշխանությունը այնքան մոտ կանգնած նախարարների ընդունարանները ցերեկները ծառայում էին որպես անձնական հանդիպումների ու դրույցների վայր, իսկ պաշտոնական գործերը «լուծվում էին» տներում<sup>20</sup>, ուր սուլթանի հատուկ ստորագրություններ հրաման էր տրվում կանանց նույնիսկ Ոստանային տոներին չափը շանցկացնել և շինել այն վայրերում, ուր տղամարդիկ են լինում, և զոտչացվում էր պատժի սպառնալիքով՝ սահմանված ժամից ավելի չմնալ փողոցներում<sup>21</sup>: Մի երկիր, ուր համատարած անգրագիտության պայմաններում այսպիսի հրամաններ էին արձակվում. «Եվ արքունի նախարարներուն կարողալ-գրել գիտնալը շատ օգուտ պատճառելուն համար, բարեխնամ արքայն հրաման ըրեր է որ անոնց մեջեն կարողալ-գրել շարժողուններ՝ ասկից մինչև երեք տարիին միջոցը ջանք ու փուլթ ընելով կարողալ-գրել սորվին, և եթե շտորվին, որ աստիճանին մեջ գտնվեր են՝ նույն աստիճանը պիտի մնան»<sup>22</sup>:

Նման մերկացումներն անհամար են, և մենք հեռու կգնանք, եթե մեկ առ մեկ մեկնաբանենք դրանք:

Հայտնի է, թե տաճկական պետության մեջ երկար ժամանակ որպիսի արտոնյալ վիճակի մեջ էին քուրդ իշխանները՝ հատկապես Վանի, Բիթլիսի, Բայազետի կողմերում, և ինչպիսի շարիքներ էին գործում նրանք տեղաբնիկների՝ հայերի, ասորիների և այլոց հանդեպ: Այդ վայրերից ստացված բողոքներում աղերսվում է ազատել ժողովրդին նրանց արյունալի հարձակումներից. հակառակ դեպքում հայերին մնում է թողնել հայրենիքն ու հեռանալ ապահով երկրներ<sup>23</sup>:

Քուրդ իշխաններին հնազանդեցնելու վերաբերյալ «Լրո գիր» տպած նյութերն աչքի են ընկնում իրադարձությունների երկդիմի մեկնաբանությամբ<sup>24</sup>: Ամենից լավ այդ մերկացնում է Բեդերհան բեյի «պատիժը», որին Պոլսում, անյուր շարագործությունների դիմաց (այս քուրդ իշխանի խղճին էր ծանրացած թեկուղ 12,000 նեստրական ասորիների և 1,200 եղիդիների կոտորածը), շլված պատիվների ևն արժանացնում:

Այդ առիթով թերթը տպում է հենց Բեդերհան բեյի հիացական խոսքը, որտեղ նա այսպիսի խոստովանություններ է անում: «Նամանավանդ կմտածեի, եթե բռնվելու ըլլամ, ինձմե շատ զանձ կպահանջեն, ի վերա այսր ամենայնի այն կողմերու բնակիչներուն հույս ըրածին չափ իմ քովս այնքան ստակ չկա, ապա քովս ստակ չգտածնուն պես՝ զիս կտանեն բանտը կղնեն ու կնեղեն, անանկ որ խմելու մը ջրով ու քիչ մը հացով կյանքս բանտին մեջ անցունել կուտան:

19 Նույն տեղում, 1846, № 8—9:

20 Նույն տեղում, № 3:

21 Նույն տեղում, 1847, № 43:

22 Հայտարար Գիր Լրո», 1841, № 26:

23 «Դիվան Հայոց պատմության», Թիֆլիս, 1915, վավերագրեր (1801—1888), 1861 թ., 1852 թ.: Ա. Պ եր պ եր յ ա ն, Պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 321: «Հայաստան», 1847, № 75, 1849, № 160:

24 «Հայտարար Լրագիր», 1847, № 31, 41:

Այս մտածութիւնները ընելով առաջի դրվածքներուն վրա կերթայի, սակայն հովանավորութեամբ ինքնակալին՝ անձի ու ստացվածքի վրայոք ազատութիւն կա եղեր, ես՝ մեկ խմելու ջրի վրա մտածելեն ետքեն, ապաստանե եղած օրս Ճեղիրեի մեջ մնացած ստացվածքս ու կալվածքս վաւերական մուրհակով գրելու համար՝ իմ կողմանէ փոխանորդ ղնելին տեսածիս պես՝ ապշեցա մնացի, և ահա զիս մայրաքաղաք բերին, աստված Նորին վեհափառութեանը երկար կյանք պարգևե, անանկ տեղ մը դրին, որ իմ նախնիքս տեսած չէ, և անոնցմե մեկը իր երազին մեջը անգամ ասանկ տեղ մը նստած չէ, փառք բարեբարին՝ մեղի նստեցուցին ու ասանկ պատիվ՝ ալ ցուցց կուտան։ Մենք ասիկա տեսնալով ու մեր ըրած պակասութիւնը մտածելով՝ մեր անձին հանդիմանութիւն կնենք կոր»<sup>25</sup>։

Բեղերհան բեյի զարմանքն անգամ շարժող այս երևույթը հաստատում է, թե որքան երեւուն հիմքերի վրա էր կանգնած արդարութիւնը տաճկական «նորոգ բարեկարգութեան» մեջ։

Պոլսահայ անդրանիկ թերթի՝ «Լրո գրի» նյութերի ընթերցումը մեկ անգամ ևս ուրվագծում է տաճկական բռնակալութեան այն ահալոր պատկերը, որի մեջ դատապարտված՝ իր օրհասին պետք է սպասեր հայ ժողովուրդը։

## «ЛРО-ГИР» КАК ПЕРВОИСТОЧНИК

В. Г. ГУКАСЯН

### Резюме

«Лро-Гир» — первая газета, издававшаяся на армянском языке в Константинополе (1832—1850 гг.). Это, по сути, почти повторный вариант первого турецкого официоза: «Тагвими-Ваган». В отличие от других армянских газет этого периода на ее страницах можно найти ценные материалы о турецкой действительности, об условиях жизни армян и других народов, находящихся под турецким игом.

<sup>25</sup> «Հայտարար լրագիր», 1847, 51։